



Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՎԱՀԱՆ ՎՐԻ. ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ

Ն Ե Ր Ս Ե Ս Ե Ա Շ Տ Ա Ր Ա Կ Ե Ց Ի

(Մահվան 100-ամյակի առթիվ)

«Հայոց Հայրապետությունը վեճ գաղափարների մի փունջ է, որ հյուսվել է հայոց մեծ հայրապետների ձեռքով. երե հիշենք հայոց հայրապետների շարքը՝ ա՛րպիսի պատկառելի դեմքեր կտեսնենք, որոնց առաջ կկանգնեն մեր գլուխը»: Այսպես է բնորոշել հայոց հայրապետների դերը հանգուցյալ Գևորգ Զ Կաթողիկոսը:

Ներսես Ե Աշտարակեցին մեկն է եղել այդ մեծ հայրապետներից: Նրա կյանքն ու գործունեությունը ուսումնասիրելիս, մեր գլուխը խոնարհվում է այդ պատկառելի և հրախոսաշատ հայրապետի խնկելի հիշատակի առաջ:

Ներսես Աշտարակեցին մեր ազգային-եկեղեցական պատմության ինքնատիպ և բացառիկ դեմքերից մեկն է որպես հայրենասեր հոգևորական, ուսումնասիր առաջնորդ և արդյունաշատ հայրապետ:

Աշտարակեցու կյանքի և գործունեության մասին գրել են շատերը, հատկապես Ալեքսանդր Երիցյանն իր «Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում», հատոր Ա և Բ, «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի» (Թիֆլիս, 1898 թ.), «Նյութեր Ներսես Ե-ի կենսագրության համար» (Թիֆլիս, 1877 թ.), «Ներսես Ե Աշտարակեցին վարդապետ Ժամանակ» (Թիֆլիս, 1877 թ.), Կ. Կոստանյանց, «Տ. Ներսես Ե Աշտարակեցի Կաթողիկոս Ամենայն Հայոց» (Ալեքսանդրոպոլ, 1909 թ.):

Ներսես Ե Աշտարակեցին ծնվել է 1770 թվականի փետրվարի 13-ին Աշտարակ դուռում, քահանայի ընտանիքում: Նրա պապը, Թորոս Շահազիզյանը, գաղթել է Անի քաղաքից: Ներսես Աշտարակեցու ազգանի անունը եղել է Թորոս, ի հիշատակ իր պապի: Նրանց ընտանիքում հաճախակի են պատահել երեխաների մահացություններ: Թորոսի մայրը՝ Սուսամբարը, նրա ծնվելուց հետո ուխտում է երեխային նվիրել, ողջ մնալու դեպքում, էջմիածնի Ս. Իջման սեղանին: Ծնողների ուխտի համաձայն, Թորոսը ու՛թը տարեկան հասակում իր կնքահոր՝ Տ. Գալուստ արքեպիսկոպոսի միջոցով տարվում է Ս. էջմիածին և հանձնվում Սիմեոն կաթողիկոսի ժառանգավորաց դպրոցին: 1780 թվականին վախճանվում է ուսումնասիր Սիմեոն կաթողիկոսը, իսկ դպրոցը, թեև շարունակվում է, բայց ուսուցիչների ցրվելու հետևանքով, կորցնում է իր հմայքը: Մանուկ Թորոսը մտնում է Գրիգոր վարդապետի մոտ, որը հետագայում, 1801 թվականին, Կոստանդնուպոլսի Պատրիարք է դառնում:

Թորոսը մանուկ հասակում եղել է մարմնապեն վտիտ, ազազուն, կարճահասակ մի երեխա, բայց մտքով ու բնավորությամբ՝ աշխույժ և կրակոտ, սրամիտ և հնարագետ, զարմանալի հիշողության տեր, աշխատասեր և ընթերցասեր: Մանկական տարիների այս հատկությունները մեծ մասամբ պահել է Աշտարակեցին մինչև կյանքի վերջը:

Այնուամենայնիվ Թորոսը ժառանգավորաց զպրոցում ձեռք է բերել կայուն գիտելիքներ, խորացել է եկեղեցական ժամասացության, Ս. Գրոց մեկնության մեջ, սովորել քերականություն և ճարտասանություն, տիրապետել աստվածաբանության և հմտացել տրամաբանական գիտությունների մեջ:

1791 թվականին Թորոսը իր կնքահայր Տ. Գալուստ արքեպիսկոպոսից ձեռնադրվում է սարկավազ 20 տարեկան հասակում և վերակոչվում Ներսես:

Տ. Գալուստ արքեպիսկոպոսի մահից հետո Ղուկաս կաթողիկոսը Ներսես սարկավազին ճշանակում է այդ ժամանակվա երկվելի կոնդակազոր Թագեոս արքեպիսկոպոսի մոտ որպես կոնդակների կազապարոզ: Երկու տարուց հետո Ներսես սարկավազը Դանիել արքեպիսկոպոսի հետ (ապազա կաթողիկոս) ուղարկվում է Զմյուռնիա, որպես առաջնորդի քարտուղար: Զմյուռնիայում 1794 թվականի սեպտեմբերի 24-ին Դանիելը Ներսես սարկավազին ձեռնադրում է կուսակրոն քահանա, ապա նվիրակության պաշտոնով ուղարկում Հելլադա, Մուդավիա և Վալաքիա, որտեղ մնում է նա շորս տարի: Դանիել արքեպիսկոպոսը 1799 թվականին ընտրվում է Կոստանդնուպոլսի Պատրիարք և Ներսեսին Վալաքիայից հրավիրում է իր մոտ: Կոստանդնուպոլսում Ներսես արեղան ստանում է մասնավոր վարդապետության աստիճանները և նշանակվում պատրիարքական տեղապահ: 1799 թվականին Ներսես վարդապետը, իմանալով Ղուկաս կաթողիկոսի հիվանդության մասին, ձմեռ ժամանակ Կոստանդնուպոլսից շտապ հասնում է Ս. էջմիածին, հայրապետի կենաց վերջին օրերին: Ներսեսի ցանկությունն էր Ղուկաս կաթողիկոսի մահից հետո նախապատրաստել Դանիել պատրիարքի կաթողիկոսական ընտրությունը: Ահա այդ օրվանից սկսում է Ներսես վարդապետի գործոն դերը Դավիթ-Դանիելյան ծանոթ հարցում: Նա միշտ մնում է Դանիելյան խմբի պարագլխի դերում: Նա իր գործունեությամբ և այդ առթիվ վարած քաղաքականությամբ հանդիսանում է Դանիելյան խմբի միտքն ու հոգին:

Ներսես Աշտարակեցու ազգային, հայրենասիրական գործունեությունն սկսվում է 1800 թվականից, ուսուպարսկական պա-

զին պատերազմի օրերից: Նա Հայաստանի ազատագրության հարցը շատ ճիշտ և առարկայականորեն կապում է Ռուսաստանին:

Ընտրյալ կաթողիկոս Հովսեփ արքեպիսկոպոս Արղուսյանի հանկարծակի վախճանումով ճանապարհ է հարթվում Դանիելի կաթողիկոսության համար: Դանիելի կաթողիկոսությունը հաղթանակն էր նաև Ներսեսի, որ 1801 թվականին հրավիրվում է Ս. էջմիածին: Սակայն Դավիթը տիրացել էր Աթոռին: Ներսեսը գնում է Կոստանդնուպոլիս, որտեղ աշխատում է Դավթի կուսակից Հովհաննես պատրիարքին աքսորել տալ: Նա ձեռք է բերում սուլթանի հրովարտակը, որով օրինական կաթողիկոս է ճանաչվում Դանիելը: 1802 թվականին Ներսեսի հրավերով ժողով է գումարվում Սուրբիլիսայի Ս. Հովհաննես վանքում, որտեղ Դանիելն ստանում է կաթողիկոսական օժոն, իսկ Դավիթը բանադրվում է:

Այնուհետև Աշտարակեցին Իշխան Յիցիանովի Կովկաս գոնավելու օրերից մեծ ժառանգություններ է մատուցում ուսական արքունիքին և բանակին Նրևանյան արշավանքների ժամանակ:

Աշտարակեցին 1807 թվականին նշանակվում է Նոր-Նախիջևանի առաջնորդական փոխանորդի պաշտոնին: Նա կազմակերպում է թեմի ազգային-եկեղեցական կյանքը, ձեռնարկում է մի մեծ ուսումնարանի բացման աշխատանքներին, որի համար մշակում է ընդարձակ «Կանոնագիրք»: Սակայն նա 1808 թվականին կանչվում է Մայր Աթոռ: Մերձազարդ Դանիել կաթողիկոսը Մայր Աթոռում կարիքն ուներ Աշտարակեցու ներկայության: Նա կարգվում է Հայրապետանոցի բոլոր գործերի կառավարիչ, Տ. Բարսեղ արքեպիսկոպոսի հետ:

Գործունեության այս նոր ասպարեզում Աշտարակեցու առաջին հոգան է լինում կարող և բանիմաց միաբաններից կազմված մնայուն ժողով հաստատել, «Բարձրագույն խորհրդարան կամ Սիւնհոդոս» անունով, կառավարելու համար վանքի գործերը: Կաթողիկոսի հաճությամբ 1808 թվականի հունիսի 23-ին բացվում է Սյունհոդոսը, որը թանկագին աջակիցն է հանդիսանում կաթողիկոսի: Սյունհոդոսի հոգին էր Աշտարակեցին:

1808 թվականի հունիսի 21-ին Դանիել կաթողիկոսը գնահատելով Ներսես վարդապետի ազգօգուտ և հնրօգուտ ծառայությունները, ձեռնադրում է նրան եպիսկոպոս և միաժամանակ շնորհում արքություն:

1 Ա. Երիցյան, Պատմություն 75-ամյա գործունեության Ներսեսյան հոգևոր զպրոցի, Թիֆլիս, 1893 թ., էջ 96:

Դանիել կաթողիկոսի մահից հետո ներսն արքեպիսկոպոսը նույն նվիրումով և ձեռնհասութեամբ համազործակցում է Եփրեմ կաթողիկոսին: Աշտարակեցի կարևոր և վճռական դեր է խաղում կաթողիկոսական ընտրապայքարում, պաշտպանելով Եփրեմի թեկնածութիւնը: Նա հասնում է իր նպատակին. Եփրեմը ընտրվում է կաթողիկոս և 1810 թվականի նոյեմբերի 6-ին օծվում: Եփրեմը կաթողիկոսացավ 65 տարեկան հասակում: Նա հիվանդ էր ֆիզիկապես և թույլ: Աշտարակեցի հանդիսանում է կաթողիկոսի աջ բազուկը. նա անդամաձան սիրով և հավատարմութեամբ ծառայում է Մայր Աթոռին, արժանանալով վըստահութեան և բոլորի հարգանքին, թի՛ հայ և թի՛ օտար շրջանակների մեջ: Նույնիսկ Մայր Աթոռի ֆինանսական կացութիւնը բարելավելու համար 1812 թվականին նա անձամբ գնում է Թավրիզ, արքայորդի Աբրահամ Միրզայի մոտ, և կատարելով իր առաքելութիւնը ի շահ Մայր Աթոռի, վերադառնում է հաջողութեամբ: Օրավոլը աճում է Աշտարակեցու ժողովրդականութիւնն ու ազդեցութիւնը Մայր Աթոռում: Եփրեմի կաթողիկոսութեան առաջին տարիներին, Աշտարակեցու ազդեցութիւնը Մայր Աթոռում այնքան էր բարձրացել, որ անգլիացի ճանապարհորդ Հենրի Մարտինը 1812 թվականին Մայր Աթոռ այցելելիս, հետագայում իր հուշերի մեջ գրում էր. «Մենաստանս այս կամ լաւ եւ է ասել՝ ընդհանուր Ազգ Հայոց են ընդ իշխանութեամբ ներսիսի՝ միոյ յարքեպիսկոպոսաց անտի, քանզի Պատրիարքն Եփրեմ է անվանակիր»²:

Էջմիածնում Ներսէս Աշտարակեցու ջանքերով և նախաձեռնութեամբ կառուցվում է դպրոցի մի նոր շէնք, 50 ձեմարանականների համար: Նա ծրագրել էր, ինչպես ինքն է գրում, բանալ «համալսարան» 200 ուսանողների համար: Սակայն այդ չի հաջողվում նրան, որովհետև գործերը այլ կերպ են դասավորվում: Մայր Աթոռում Աշտարակեցու միահեծան իշխանութիւնը հաճելի չէր միշտ ընդ շահախնդիր միաբանների, և ահա նրանք սկսում են խուլ պայքար Աշտարակեցու դեմ: Հակառակորդները իրենց ամբաստանութիւններով աշխատում են խախտել Եփրեմի վստահութիւնը Աշտարակեցու հանդեպ: Աշտարակեցին, խորապես վիրավորված, հրաժարվում է Սլունհողոսից և քանկութիւն է հայտնում հեռանալ Մայր Աթոռից: Բայց Եփրեմ կաթողիկոսը մերժում է նրա հրաժարականը:

Այդ օրերին սակայն, այսինքն 1814 թվականին, Թիֆլիսի թեմի առաջնորդ Աստվածատուր արքեպիսկոպոսը հրաժարվում է իր պաշտոնից: Վրաստանի թեմը շափազանց կարևոր թեմ էր Մայր Աթոռի համար, և ահա Աշտարակեցին նշանակվում է Վրաստանի հայոց առաջնորդ: Աշտարակեցու առաջնորդութեան տարիների գեղեցիկ արդյունքներից կարևորագույնն է լինում Թիֆլիսի ներսիսյան վարժարանի բացումը:

Աշտարակեցին միշտ բարձր է գնահատել ուսման և դաստիարակութեան նշանակութիւնը: Նա մինիստր Բլուրդովին ուղղած իր 1838 թվակիր նամակում գրում. «Ես ի ժամանակաց 20-ամեայ հասակի իմոյ տեսանելով և լսելով ի մերազնեայս սակաւ յոյժ գիտնական անձինս, և զգալով զայնպիսի համազգական ապախտութիւն իմում հայրենի ազգի առ չարոյ ուսումնարանաց, միշտ միտք իմ և խորհուրդք տառապեցուցանեն վիս խոկալ վասն կարևոր հնարից ազգական ուսումնարանաց՝ ունեւիլ»:

Ներսէս Աշտարակեցին 44 տարեկան հասակում էր 1814 թվականին, ներ նշանակվեց Վրաստանի թեմակալ առաջնորդ: Այդ օրերին համարյա չկային դպրոցներ: Նա իր ուշադրութիւնը կենտրոնացրեց եկեղեցիների պայծառութեան և հովհարականութեան զարգացման շնորհակալ աշխատանքների վրա:

Դպրոցների բացումով, ուսման և դաստիարակութեան տարածումով Աշտարակեցին ուզում էր ապագա առաջնորդներին օրինակ դառնալ: «Արձան օրինակական ապագայից վիճակաւորաց հայոց»: Դպրոցների բացումը նյութական մեծ դումարներ պահանջող ձեռնարկ էր, իսկ Աշտարակեցին փող չունէր: Նա ամեն տեղ դիմումներ էր գրում, այդ նպատակի համար միջոցներ ապահովելու մտքով: 1815 թվականին Աշտարակեցին մի փոքրիկ դպրոց է բաց անում վանքի եկեղեցուն կից, 20 աշակերտներով: Ուսուցիչ է նշանակվում վաղարշապատեցի Տ. Հովհաննիսյանը, որն իշխան Յիգիանովի ժամանակ Երևանի հայ ժողովրդին գաղթեցրել էր և բերել Թիֆլիսի Հավարար և Գարնաթուրան արվարձանները: Այդ դպրոցում դասավանդում էր նաև իր ժամանակին հռչակավոր դարբարդի Պողոս վարդապետը: Ներսէսի այդ սկզբնական դպրոցի անդրանիկ սաներից էին մեր հայտնի յուսավորիչներ Խաչատուր Աբովյանը, Ստեփանոս Նազարյանը և ուրիշներ: Ստեփանոս Նազարյանը Պողոս վարդապետի մասին գրում է. «Նորա խցի մեջ աշխատում էինք օր ու ցերեկ գուլն ջարդելով Չամչյանի քերականութեան վրա... և պիտո է ասել, որ այդ վարժապետը ամբիջ ծեծքան թե ուսում է տվել իր աշակերտներին:

2. Ա. Երեյան, Պատմութիւն 75-ամյա գործունեության ներսիսյան Հոգևոր դպրոցի, էջ 91

Այսպես էր այդ ժամանակի հայկական ուսումը, և այս բանի մեջ մեղավոր չի Պողոս վարդապետը, այլ նորա կուպիտ ու խավար ժամանակը³:

Բայց Աշտարակեցու անունը սերտորեն կապված է Թիֆլիսի Ներսիսյան վարժարանի հետ առավելաբար: Զանազան կտակների և նվիրատվությունների փողերով, Աշտարակեցին Ներսիսյան դպրոցի հիմքը օրհնում է 1818 թվականին: Դպրոցն ավարտվում է 1824 թվականին: Աշտարակեցին հոգում է նաև դպրոցի համար որակյալ դասախոսական կազմ հրավիրելու մասին: Մոսկվայից հրավիրում է իրեն որպես օգնական Հարություն քահանա Ալամդարյանին, որ ժամանակի զարգացած հայկարաններից մեկն էր, ազնիվ մտավորական և հոգելից հոգևորական:

Ալամդարյանը ծնվել է 1796 թվականին Աստրախանում: Նա քաջածանոթ է եղել հայոց և ուսաց լեզուներին, Ահա այդ ժամանակվանից սկսվում է Ալամդարյանի արդյունավոր գործունեությունը Աշտարակեցու նորաբաց վարժարանում: Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը շատ կարևոր և պատասխանատու դեր է կատարել Կովկասի հայկական ազգային-նկեղեցական և մշակութային կյանքում և փառք ու պատիվ է բերում Ներսես Աշտարակեցու անվան:

Աշտարակեցու հայրենասիրական գործունեության շրջանն է հանդիսանում ուսուպարսկական պատերազմը: Խանդավառություն ամեն կողմ: Հասել է ազատագրության ժամը հայ ժողովրդի: Ռուսական բանակները հաղթական քայլում են դեպի Ս. էջմիածին, Երևան: Աշտարակեցին ամեն տեղ է, խո-

սում, կազմակերպում, ժողովրդին ոտքի է հանում ուսաց քաջարի բանակի կողքին:

1827 թվականի մարտին նա Թիֆլիսում կազմակերպում է հայկական կամավորական զոմեղը և ապրիլին ուսական առաջապահ զորքի հետ ձանապարհ է ընկնում դեպի ռազմաճակատ: Զորքի հետ է նաև Աշտարակեցին, վեղար ի գլուխ, խաչ ի ձեռին, իրեն նոր օրերի Ղևոնդ երեց: Հայ ժողովրդի երախտաշատ զգացումների համար այդ օրերին Աշտարակեցին կոչվեց «Պաշտպան Հայրենյաց»: Նա իր հայրենասիրությունը հայ ժողովրդի կուռքն էր դարձել:

Աշտարակեցին 1843 թվականին ընտրվում է կաթողիկոս և Լուսավորչի պատմական Աթոռի վրա է բազմում որպես Ներսես Ե Աշտարակեցի: Իր կաթողիկոսության շրջանում նա անում է այն, ինչ չէր կարողացել անել վարդապետության և արքեպիսկոպոսության ժամանակ:

Աշտարակեցին մահանում է 1857 թվականի փետրվարի 13-ին, լուսավոր անոճն և անմոռաց հիշատակ թողնով մեր ազգային-նկեղեցական տարեգրության մեջ:

Հայ ժողովրդի երախտաշատ սրտում Ներսես Ե Աշտարակեցու անունը գրվել է ոսկյա տառերով:

Աշտարակեցին իր հայրենանվեր և ժողովրդաշնվեր գործունեությամբ լուսավոր ու անմոռաց հիշատակ է թողել մեր նկեղեցու և ժողովրդի կյանքում:

Նրա մահվան 100-ամյակի առթիվ մենք, հոգևորականներս մանավանդ շատ բան ունենք սովորելու նրա կյանքի և գործունեության լուսավոր էջերից:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

3 «Հյուսիսփայլ», 1858 թ., № 2:

